# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/149 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **09 դեկտեմբերի 2024թ.**

2024թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ուլտրաձայնային հոսքաչափի ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/149 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Խաչատրյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ,

Լ. Մուրադյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Քերոբյան՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Խաչատրյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ստացված հատուկ կարծիքի վերաբերյալ:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

## 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի դեկտեմբերի 9-ին Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը Հանձնաժողովին ներկայացրեց 2024 թվականի դեկտեմբերի 5-ին Ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված հատուկ կարծիքը՝ «Հայ-գերմանական ԱՐԱՔՍ ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի և գնային առաջարկի վերաբերյալ, համաձայն որի կատարվել են ուսումնասիրություններ, ինչի արդյունքում պարզվել է, որ «Հայ-գերմանական ԱՐԱՔՍ ՀՁ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինն առերևույթ պակաս է ինքնարժեքից:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. «Հայ-գերմանական ԱՐԱՔՍ ՀՁ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, այն է՝ «առաջարկված գինը» ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից» ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման վերադասի հատուկ կարծիքը /կցվում է/:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2024 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-ին ենթակետերով սահմանված պահանջները.

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Խաչատրյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Մուրադյան ____________

Ա. Քերոբյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար*

Ա. Առաքելյան ____________